ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան
համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Մայիսյան, 1-ին փողոց, տուն 52, հեռ.
(093) 490666 , mayisyan.armavir@mta.gov.am

N 208
20 դեկտեմբեր 2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Արմավիրի մարզի Մայիսյանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում

2019 թվականի դեկտեմբերի 13-ին կայացած համայնքի ավագանու

թիվ 11 հերթական նիստի թվով 7 որոշումները

Առդիր՝ 16 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Կատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 11 հերթական նիստի
թիվ 69-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 13 գ.Մայիսյան

Հավելված
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 11
հերթական նիստի թիվ 69-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԱԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՄՔԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

17/27.3/28554-19
06.12.19

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՄԱՅԻՍՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մովսիսյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 189 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի Հավելվածի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «1-ին մասի 1-ին կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին կետի 1-ին ենթակետով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, իսկ 3-րդ ենթակետից անհրաժեշտ է հանել «սույն օրենքի իմաստով» բառերը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13.դեկտեմբերի 2019 թ. թիվ 11 հերթական նիստի

թիվ 70- Ն որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18- րդ և 19 –րդ կետերով , «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասով, 12-րդ և 14-րդ հոդվածներով « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի, 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 17/27.3/28554-19 գրությամբ փորձագիտական եզրակացությունը

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Արմավիրի մարզի Մայիսյան գյուղական համայնքի վարչական տարածքում սահմանված 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Մայիսյան համայնքի 08.11.2019 թվականի թիվ 61- Ն որոշումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա.Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե.ՄՈՎՍԻՍՅԱՆ

13.12.2019 թ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 70-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1). հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

2) սույն կետի առաջին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

դ) 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

3). ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1). չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2.)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ

թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի առաջին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5 համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7 համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր դրամ

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ իններ հազար դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ

2). ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ

ե)200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ինը հազար դրամ

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1). հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար հարյուր դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

2. ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար դրամ

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ իններ հազար դրամ.

11. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5). դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6). եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով..

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 11 հերթական նիստի
թիվ 71 -Ա որոշում

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Մայիսյան համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 270.000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Մայիսյան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 62-Ա որոշումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 13 գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 11 հերթական նիստի
թիվ 72 -Ա որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԱԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել համայնքապետարանի և համայնքի ենթակայության հիմնարկների 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Մայիսյան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 62-Ա որոշումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 13 գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ
11 հերթական նիստի թիվ 72-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՅԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

	Հաստիքի անվանումը	Թվաքանակը	Պաշտոնական դրույքաչափերը
1	Համայնքի ղեկավար	1	270.000 դրամ
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	145.000 դրամ
3	Աշխ. Քարտուղար/ծածկ.1.2-1/	1	150.000 դրամ
4	Առաջատար մասնագետ/ծածկ.3.1-1/	1	148.000 դրամ
5	1-ին կարգի մասնագետ/ծածկ.3.2-1/	1	135.000 դրամ
6	1-ին կարգի մասնագետ/ծածկ.3.2-2/	1	135.000 դրամ
7	2-րդ կարգի մասնագետ/ծածկ.3.3-1/	1	125.000 դրամ
8	2-րդ կարգի մասնագետ/ծածկ.3.3-2/	1	125.000 դրամ
9	Հավաքարար	1	92.618 դրամ
10	Անասնաբույժ	1	92.618 դրամ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

	Հաստիքի անվանումը	Թվաքանակը	Պաշտոնական դրույքաչափերը
1	Մշակույթի տան տնօրեն	1	94.618 դրամ
2	Գրադարանավար	1	92.618 դրամ
3	Այգեպան	1	90.618 դրամ
4	Հավաքարար	1	92.618 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 11 հերթական նիստի
թիվ 73-Ա որոշում

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի քարտեզագրման համար փոխանցել 300.000 / երեք հարյուր հազար / դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 13 գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մայիսյան համայնք, Էլ. Փոստ՝ mayisyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«13» դեկտեմբերի 2019 թվականի թիվ 74-Ա

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ամանորի կապակցությամբ համայնքում միջոցառում կազմակերպելու համար փոխանցել 320 .000 / երեք հարյուր քսան հազար/ դրամ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա . Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա . Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. 13. դեկտեմբերի գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2019 թ.

թիվ 11 հերթական նիստի
թիվ 75-Ա որոշում

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Դիմում ներկայացրած ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան
6. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 13 գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ
11 հերթական նիստի թիվ 75-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1 Արմեն Հարությունյան----------50.000 / հիսուն հազար/ դրամ

2 Սվետիկ Շահինյան----------50.000 / հիսուն հազար/ դրամ

3 Սամվել Սարգսյան----------50.000 / հիսուն հազար/ դրամ

4 Արմեն Հովհաննիսյան----------40.000 /քառասուն հազար/ դրամ

5 Եվա Սարգսյան----------40.000 /քառասուն հազար/ դրամ

6 Զոյա Պողոսյան---------- ------40.000 /քառասուն հազար/ դրամ

7 Օսաննա Հարությունյան--------- ----40.000 /քառասուն հազար/ դրամ

8 Կարինե Զադերյան----------40.000 /քառասուն հազար/ դրամ

9 Նելլի Մովսիսյան----------40.000 /քառասուն հազար/ դրամ

10 Կարեն Հակոբյան----------40.000 /քառասուն հազար/ դրամ

11 Սամվել Մանուկյան---------- 30.000 /երեսուն հազար/ դրամ

12 Զուլիետա Մարտիրոսյան----------20.000 /քսան հազար/ դրամ

13 Անահիտ Անտոնյան----------20.000 /քսան հազար/ դրամ

14 Հրաչիկ Քոչարյան----------20.000 /քսան հազար/ դրամ

15 Ալիսա Քոչարյան----------20.000 /քսան հազար/ դրամ

16 Արման Սարգսյան----------20.000 /քսան հազար/ դրամ

17 Սերգեյ Հակոբյան----------20.000 /քսան հազար/ դրամ

18 Մարինե Կիրակոսյան----------20.000 /քսան հազար/ դրամ